ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ

Սիրում եմ քեզ,
Հայո՛ց լեզու,
Մայրիկիս պես
Անուշ ես դու:

Քեզնով եմ ես
Հպարտանում,
Կարդում, գրում,
Արտասանում:

ՀԱՍՄԻԿԻ ՆԱՄԱԿԸ

Իմ լա՛վ տատի, քաղցրի՛կ տատի,
Կարոտել եմ քեզ շա՛տ շատ,
Ի՞նչ կլինի՝ գիրս կարդաս,
Վեր կենաս գաս Արտաշատ:

Իմ լա՛վ տատի, անու՛շ տատի,
Մեծացել եմ արդեն ես,
Դպրոց գնում, գրքեր կարդում,
Գիր եմ գրում մեծի պես:

Քո Հասմիկ

Ա

Ամպն անձրևեց առատ-առատ,
Արտը աճեց ամպից արագ,
Արտը աճեց՝ աչքն արևին,
Արմատները՝ անձրևներին:

Ն

Նկարիչ է Նաիրին,
Նայում է նոր նկարին,
Նկարել է նավաստի՝
Նման է նապաստակի: